



*Համարը N 53
Տիպը Քաղվածք
Սկզբնաղբյուրը Չի հրատարակվել
Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը*

*Տեսակը Հիմնական
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան
Ընդունման ամսաթիվը 21.12.2017
Ստորագրման ամսաթիվը 22.12.2017
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՍՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

21 դեկտեմբերի 2017 թվականի N 53

13. ԿԱԹԻԼԱՅԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՍՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հավանություն տալ կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին՝ համաձայն հավելվածի:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Կ. Կարապետյան

2017 թ. դեկտեմբերի 22
Երևան

[Հավելված](#)
[ՀՀ կառավարության 2017 թ. դեկտեմբերի 21-ի նիստի N 53 արձանագրային որոշման](#)

Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 21-ի նիստի N 53
արձանագրային որոշման

ԾՐԱԳԻՐ

**Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի
տոկոսադրույքների սուբսիդավորման**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	4
2. ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	4
3. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ	5
4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ.....	5
5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	6
6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ	7
7. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ	9
8. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ	10
ՀԱՅՏԻ ՁԵՎԱԶԱՓ	11
ԱՂՅՈՒՍԿԱՆԵՐ	

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ոռոգելի գոտու գյուղատնտեսական շրջանառության մեջ ընդգրկված բարձրարժեք մշակաբույսերի՝ պտղատու և խաղողի այգիների, ինչպես նաև բանջարաբուստանային մշակաբույսերի մշակությունը, դրանց տարածքների ավելացումը և բերքատվության բարձրացումը հանդիսանում է գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարության գերակա ուղղություններից մեկը:

2. Համաձայն ՀՀ ազգային վիճակագրության ծառայության տվյալների՝ 2016 թվականին Հայաստանի Հանրապետությունում մշակվել են 37,96 հազ. հա բանջարաբուստանային մշակաբույսեր, այդ թվում 30,7 հազ. հա՝ բանջարանոցային, 7,26 հազ. հա՝ բոստանային: Բազմամյա տնկարկների՝ պտղատու և խաղողի այգիների տարածքը կազմել է 57,9 հազ. հա, այդ թվում 40,6 հազ. հա՝ պտղատու, 17,3 հազ. հա՝ խաղողի: Այսփուլ, բարձրարժեք մշակաբույսերի հողատարածքները կազմում են 95,86 հազ. հա, որոնց ավանդական՝ ակոսային եղանակով ոռոգման համար պահանջվում է շուրջ 660,0 մլն.մ³ ջուր, իսկ հաշվի առնելով ոռոգման համակարգում ջրի կորուստները՝ շուրջ 1,0 մլրդ մ³:

3. Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում՝ կապված կլիմայի գլոբալ փոփոխությունների և Արարատյան հարթավայրի ստորգետնյա ջրերի աննախադեպ սպառման հետ, ստեղծվել է ջրային ռեսուրսների խիստ դեֆիցիտ, որը զգալի բացասական ազդեցություն է թողնում գյուղատնտեսական մշակաբույսերի կայուն ջրամատակարարման վրա: Չնայած կառավարության կողմից քայլեր են ձեռնարկվում՝ նոր ջրամբարների կառուցման և ստորերկրյա ջրային պաշարների օգտագործման կրճատման ճանապարհով հիմնախնդրի լուծման ուղղությամբ, այնուամենայնիվ դրանք զգալի ժամանակ և ֆինանսական միջոցներ են պահանջում: Ջրային պաշարների դեֆիցիտի լրացումը Սևանա լճի ջրային պաշարների հաշվին հանգեցնում է էկոլոգիական խնդիրների, որը լուրջ մտահոգություն է առաջացնում հասարակության շրջանում:

4. Ստեղծված իրավիճակում ջրային պաշարների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում պետության դերը տարեց տարի առավել կարևորվում է: Այն ընդգրկում է ոռոգման քաղաքականության մշակում, այդ թվում՝ ոռոգման արդյունավետ համակարգերի ներդրման խթանում՝ հողօգտագործողներին սուբսիդավորման և երկարատև վարկավորման միջոցով:

5. Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման միջոցով գյուղատնտեսությունում տրամադրվող վարկերի մատչելիության ծրագրերի գծով հանրապետությունում առկա է զգալի փորձ: Ընդհանուր առմամբ գյուղատնտեսական գործունեություն իրականացնող տնտեսավարողներին 2011-2016 թվականներին տրամադրվել է շուրջ 119.4 հազար միավոր վարկ 99.1 մլրդ դրամ գումարով: Սուբսիդավորման գումարը կազմել է շուրջ 4.7 մլրդ դրամ:

6. Համաձայն ՀՀ ազգային վիճակագրության ծառայության ՀՀ 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման տվյալների՝ հանրապետությունում 2701 ֆիզիկական անձի և 26 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտների հողատարածքներում (զբաղեցրած տարածքների (չափերի) վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ) ներդրվել են կաթիլային ոռոգման համակարգեր, 2878 ֆիզիկական անձի և 4 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտների հողատարածքներում՝ անձրևացման համակարգեր, իսկ

240196 ֆիզիկական անձի և 69 իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտների հողատարածքները ոռոգվում են ակոսային եղանակով:

7. Թեև տրամադրված վարկային միջոցները ոռոգման արդյունավետ համակարգերի ներդրման նպատակով օգտագործման վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ, սակայն ակնհայտ է, որ հանրապետությունում նշված համակարգերի տարածումն ընթանում է բավականին ցածր տեմպերով:

8. Բարձրարժեք մշակաբուսերով զբաղեցված հողատարածքների ոռոգման հիմնախնդրի լուծման համար նպատակահարմար է ջրախնայողական համակարգերի կիրառման խրախուսումը՝ մակերեսային ոռոգման համեմատությամբ դրանց առավելություններին ծանոթացման միջոցով ընդլայնելով ջրօգտագործողների իրազեկության մակարդակը, արդյունքում՝ նպաստելով այդ համակարգերի աստիճանական ներդրմանը:

1. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

9. Ծրագրի իրականացման ռազմավարական նպատակներն են՝

- 1) ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- 2) հողօգտագործողների եկամուտների աճի ապահովումը:

10. Ծրագրի իրականացման նպատակը բարձրարժեք մշակաբույսերով՝ բազմամյա տնկարկներով և բանջարեղենատանային մշակաբուսերով զբաղեցված հողատարածքներում ոռոգման արդյունավետ եղանակների ներդրման խթանումն է:

11. Ծրագրի իրականացման նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հիմնական խնդիրները՝

- 1) ընդլայնել մակերեսային ոռոգման նկատմամբ միկրոռոգման առավելությունների վերաբերյալ ջրօգտագործողների իրազեկության մակարդակը՝ շահագրգռելով վերջիններիս սեփական կամ վարկային միջոցներով իրենց հողակտորներում ներդնելու կաթիլային ոռոգման համակարգեր,
- 2) պետական աջակցություն ցուցաբերել կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման գործընթացում՝ գյուղատնտեսական բարձրարժեք մշակաբույսերի մշակությամբ զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող՝ կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար նպատակային վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով բարձրացնել վարկավորման մատչելիության մակարդակը:

2. ՈՌՈԳՄԱՆ ԿԱԹԻԼԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12. Ոռոգման կաթիլային եղանակը, որը հիմնականում լայնորեն կիրառվում է այն երկրներում, որտեղ առկա է ոռոգման ջրի դեֆիցիտ և բարձր ինքնարժեք, ինչպես նաև ռելիեֆի կտրտվածություն, ջրգող օջախների առկայություն և այլն, շատ արդյունավետ է հատկապես բանջարեղենատանային մշակաբուսերի ու բազմամյա տնկարկների ոռոգման համար և նպատակահարմար է ինչպես փոքր տնտեսություններում, այնպես էլ արդյունաբերական մասշտաբով արտադրությունների համար:

13. Ջրերն ավելի արդյունավետ օգտագործելու հնարավորությունը կաթիլային ոռոգման ամենադրական բնութագրերից մեկն է՝ ջրի խնայողությունը մակերեսային ոռոգման համակարգի համեմատությամբ կազմում է ավելի քան 50%: Բացի այդ, ոռոգման կաթիլային եղանակն ունի հետևյալ առավելությունները.

- 1) կաթիլային ոռոգումը թույլ է տալիս ապահովել պարարտանյութերի մատուցումը ոռոգման ջրի հետ միասին բույսի աճի համար անհրաժեշտ տարբեր փուլերում, պարարտանյութերի ծախսը կրճատվում է 50%-ով,
- 2) ոռոգման տարածքի սահմանափակ խոնավեցումը չի խանգարում գյուղատնտեսական մեքենաների աշխատանքին, ոռոգումից հետո հողի չորացմանը սպասելու անհրաժեշտություն չի առաջանում, բոլոր գյուղատնտեսական աշխատանքները կարելի է անցկացնել օպտիմալ ժամանակում,
- 3) կաթիլային ոռոգումը բացառում է մակերևութային հոսքը, այսինքն կանխում է հողի ջրային էրոզիան, հետևաբար այսպիսի ոռոգման համակարգը կարելի է օգտագործել անգամ զառիթափ լանջերում, անհարթ հատվածներում, ոչ կանոնավոր հողատարածքներում և այլն,
- 4) քանի որ միջշարային տարածությունը մնում է չոր, հեշտանում է պայքարը մոլախոտերի դեմ, բացի դրանից հնարավորություն է ստեղծվում ոռոգման ցանցի միջոցով օգտագործել հերբիցիդներ առանց ավելորդ աշխատանքների,
- 5) կաթիլային ոռոգման ժամանակ վեգետացիոն զանգվածի և պտղի խոնավեցում տեղի չի ունենում, ինչն ունի էական նշանակություն հիվանդությունների կանխման և բարձրորակ բերքի ստացման գործում և այլն:

14. Ոռոգման կաթիլային եղանակի առավելությունների մասին են խոսում որոշ երկրների փորձի արդյունքները, որտեղ այն կիրառվել է.

- 1) Հնդկաստանում բանջարանոցային մշակաբույսերի բերքատվությունը բարձրացել է 10-47%, միջինը՝ 27% ջրի խնայողությունը կազմել է 15-68%, միջինը՝ 38%: Բերքատվության բարձրացում է գրանցվել նաև 23%-ով խաղողի, 98%-ով նոնենու այգիներում, 50%-ով լոլիկի, 88%-ով ձմերուկի դաշտերում, իսկ ջրի խնայողությունը՝ 36-53%,
- 2) Հորդանանում, Մարոկկոյում, Թուրքիայում, Եգիպտոսում և Թունիսում բերքատվությունն աճել է 10-30 %-ով, ջրի խնայողությունը կազմել է 20-55%,
- 3) այլ հետազոտություններով ստացվել է, որ եկամուտ-ծախս հարաբերակցությունը կաթիլային ոռոգման համակարգի կիրառման դեպքում կազմել է 4.75՝ նոնենու, 2.05՝ խաղողի և 1.91՝ լոլիկի մոտ՝ մակերեսային եղանակով ոռոգման՝ համապատասխանաբար 2.8, 1.48 և 1.25 արդյունքների փոխարեն:

3. ԾՐԱԳՐԻ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

15. Ծրագիրը նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում՝ սկսած 2018 թվականից:

16. Ծրագիրը նախատեսվում է ներդնել բազմամյա տնկարկներով (պտղատու և խաղողի այգիներ, հատապտուղներ), բանջարանոցային և բոստանային մշակաբույսերով զբաղեցված տարածքներում՝ բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների:

4. ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՆ

17. Ծրագրով նախատեսվում է ՀՀ պետական բյուջեի հաշվին, տարեկան 1.6-1.7 հազ. հա հողատարածքների հաշվարկով, սուբսիդավորել կաթիլային

ռոռզման համակարգերի ներդրմանն ուղղված վարկերի տոկոսադրույքների մինչև 12 տոկոսային կետը:

18. Տրամադրվելիք սուբսիդավորման գծով կանխատեսվող ծախսերի ֆինանսական գնահատման համար հիմք են ընդունվել հետևյալ գործոնները՝

- 1) վարկերը տրամադրվելու են առավելագույնը 14 %-ով,
- 2) 1 հա հողատարածքում համակարգի ներդրման միջին արժեքը 1.3 մլն դրամ է (կաթիլային ռոռզման համակարգի ներդրման համար անհրաժեշտ ֆինանսական ներդրումների մոտավոր հաշվարկները ներկայացվում են աղյուսակներ 1-3-ում), վարկավորման գումարը տարեկան 1600 հա հողատարածքների համար՝ շուրջ 2.0 մլրդ դրամ,
- 3) տրամադրվող վարկի մարման ժամկետը 3 տարի է, մարման պարբերականությունը՝ 6 ամիս:

19. Ծրագրի իրականացման համար 2018 թվականին կպահանջվի 114,652.778 հազ. դրամ, 2019 թվականին՝ 313,263.889 հազ. դրամ, 2020 թվականին՝ 425,208.333 հազ. դրամ, 2021 թվականին՝ 455,000.0 հազ. դրամ, 2022 թվականին՝ 966,875.0 հազ. դրամ (5-րդ տարում սուբսիդավորման համար անհրաժեշտ գումարը կազմում է 455,000.0 հազ. դրամ, իսկ մնացած 511,875.0 հազ. դրամը 5-րդ տարում վերցված վարկերի հաջորդող երեք տարիների 12 տոկոսային կետի սուբսիդավորման գումարն է, այդ թվում՝ 6-րդ տարվա սուբսիդավորման գումարը կազմում է 340,347.222 հազ. դրամ, 7-րդ տարվանը՝ 141,736.111 հազ. դրամ, 8-րդ տարվանը՝ 29,791.667 հազ. դրամ):

20. Ստորև ներկայացվող աղյուսակում ներկայացված են վարկի հաշվարկային պայմանները և դրանցից բխող ամսական վճարումները (կանխավճարը՝ 0%), իսկ պահանջվող սուբսիդիայի մանրամասն հաշվարկը ներկայացվում է աղյուսակ 5-ում:

Հաշվարկների պայմանները	
Վարկի միջին գումարը 1 հա-ի համար	1,300.0 հազ. դրամ
Վարկի տևողությունը	36 ամիս (3 տարի)
Վարկի մարման պարբերականությունը	6 ամիս

Տարի	Պահանջվող սուբսիդիա*, հազ. դրամ
1	114,652.778
2	313,263.889
3	425,208.333
4	455,000.0
5	966,875.0
Ընդամենը	2,275,000.0

5. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

21. Ծրագրի իրականացումից ակնկալվում են ինչպես քանակական, այնպես էլ որակական արդյունքներ: Մասնավորապես՝ ծրագրով նախատեսված թիրախային

քանակությունն ապահովվելու դեպքում առաջիկա 5 տարում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝

1) քանակական

ա. ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործում և էական խնայողություն (առնվազն 75 մլն մ³ 2018 թ.՝ 5 մլն մ³, 2019 թ.՝ 10 մլն մ³, 2020 թ.՝ 15 մլն մ³, 2021 թ.՝ 20 մլն մ³, 2022 թ.՝ 25 մլն մ³),

բ. բերքատվության աճ՝ շուրջ 9 մլրդ դրամ հավելյալ եկամուտ (2018 թ.՝ 0.6 մլրդ դրամ, 2019 թ.՝ 1.2 մլրդ դրամ, 2020 թ.՝ 1.8 մլրդ դրամ, 2021 թ.՝ 2.4 մլրդ դրամ, 2022 թ.՝ 3 մլրդ դրամ),

գ. ՀՀ պետական բյուջեի մուտքերի ավելացում՝ տարեկան ներդրվող գումարի առնվազն 17%-ի չափով՝ ավելացված արժեքի (նախատեսվող գումարի շուրջ 60%-ը ներդրվող սարքավորումներն են) և շրջանառության (առնվազն՝ 5%) հարկերի տեսքով, ինչպես նաև, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման շնորհիվ՝ եկամտահարկի տեսքով (տարեկան՝ ավելի քան 350.0 մլն դրամ),

դ. կաթիլային ոռոգման համակարգի շահագործման դեպքում տնտեսվում են ինչպես նյութական միջոցներ, այնպես էլ մարդկային ռեսուրս: Տնտեսված ժամանակից և ֆինանսական միջոցներից հնարավորություն է առաջանում մշակել հավելյալ տարածք: Մշակության կազմակերպման հավելյալ հնարավորությունը (խաղողի վազի, լուլիկի և խնձորենու օրինակներով) ներկայացվում է աղյուսակ 4-ում.

2) որակական

ա. բերքի որակի բարելավում,

բ. հանրապետության ջրային, էներգետիկ և հողային ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործում,

գ. շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության մեղմացում,

դ. մշակովի հողատարածքների ընդլայնում՝ պոտենցիալ ոռոգելի, սակայն փաստացի չմշակվող տարածքների մշակման խթանում,

ե. միկրոռոռոգման տեխնոլոգիաների տարածում գյուղացիական տնտեսություններում,

զ. ոռոգման համակարգի արդիականացման խթանում, ոռոգման շրջանում լարվածության նվազում, հաշվառման և կառավարման արդյունավետության բարձրացում,

է. ջրօգտագործողի (ֆերմերի) ֆինանսատնտեսական և սոցիալական վիճակի բարելավում, վճարունակության բարձրացում,

ը. գյուղական աղքատության մակարդակի կրճատում:

6. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

22. Ծրագիրը կիրագործվի հետևյալ հիմնական մոտեցումների կիրառմամբ.

1) Ծրագրի շահառուներն են կաթիլային համակարգի ներդրման համար սույն ծրագրի պայմաններին համապատասխան պայմանագիր կնքած գյուղատնտեսությունում տնտեսավարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը), որոնք բավարարում են ծրագրին մասնակից բանկի կամ վարկային կազմակերպության ֆինանսական (վարկունակության) պահանջները (այսուհետ՝ Վարկառու).

2) ծրագրի մասնակիցներն են.

ա. ցանկացած բանկ կամ վարկային կազմակերպություն (այսուհետ՝ Ֆինանսական կառույցներ), որը սույն ծրագրի պայմաններին համապատասխան վարկ է տրամադրում տնտեսավարողներին: Ծրագրի մասնակից կարող են դառնալ այն Ֆինանսական կառույցները, որոնք բավարարում են ծրագրի պահանջներին:

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը (այսուհետ՝ ԳՖԿ):

գ. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը:

դ. ծրագրի շրջանակներում կաթիլային համակարգեր ներդնող այն մասնագիտացված կառույցները, որոնք, բավարարելով ներքոհիշյալ պայմաններին և չափանիշներին, ներայացնելով համապատասխան հայտ (ձևաչափը կցվում է), կընդգրկվեն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հրապարակված ցանկում (այսուհետ՝ Կապալառու):

– մեկ միավոր հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը՝ սխեմայի կազմումն ու տեղադրումն իրականացվում է մեկ կազմակերպության կողմից,

– կաթիլային ոռոգման համակարգի սխեմայի բացատրական մասում պարտադիր ներառվում են բույսի՝ ջրի պահանջարկի հիմնավորումը, ոռոգման և պարարտացման կառավարման ծրագրերը, ինչպես նաև լիարժեք տեղեկություններ սարքավորումների ծագման, այդ թվում՝ օգտագործված նյութերի մասին,

– համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումն ու երաշխիքային սպասարկումն իրականացնում է համակարգը ներդնող կազմակերպությունը՝ Կապալառուն,

– Կապալառուն պետք է ունենա նախորդ տարիներին նմանատիպ աշխատանքների կատարման փորձ:

3) վարկավորման և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը.

ա. վարկերը տրամադրվելու են Հայաստանի Հանրապետության դրամով, առավելագույնը 14 % անվանական տոկոսադրույքով, ընդ որում, վարկի հետ կապված Ֆինանսական կառույցների ծառայությունների համար այլ վճարներ (կանխիկացման վճար, սպասարկման վճար, միջնորդավճարներ և այլն) չեն գանձվում:

բ. Ծրագրի շրջանակներում 1 հա-ի համար կատարվող վարկային ներդրումը անկախ մշակաբուսից կազմում է առավելագույնը 2.2 մլն դրամ: Սույն ծրագրով տրամադրվող վարկի գումարը մեկ Վարկառուի համար չի կարող գերազանցել 150.0 մլն դրամը՝ հնարավորինս շատ տնտեսավարողների Ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

գ. Վարկավորման գործընթացը նախաձեռնում են Վարկառուները՝ մի կողմից երկկողմ պայմանագիր կնքելով իր կողմից նախընտրելի Կապալառուի հետ, և մյուս կողմից դիմելով Ֆինանսական կառույցին՝ տվյալ պայմանագրի շրջանակում վարկավորում ստանալու համար:

դ. Ֆինասական կառույցի կողմից Վարկառուին տրամադրվող վարկով նախատեսված գումարը (ֆինանսական կառույցի վարկունակության պահանջներին բավարարելու դեպքում) Վարկառուի և Կապալառու միջև կնքված պայմանագրի հիման վրա՝ անկանխիկ եղանակով, միանվագ կամ փուլ առ փուլ՝ նպատակային

մոնիթորինգ անցկացնելուց հետո փոխանցում է Կապալառուի համապատասխան հաշվին.

ե. վարկի մայր գումարի համար կարող է սահմանվել արտոնյալ ժամկետ՝ առավելագույնը տարեկան 6 ամիս,

զ. վարկի մարման ժամկետը մինչև 3 տարի է, վարկի մարման գործընթացն իրականացվում է Ֆինանսական կառույցի և Վարկառուի միջև կնքվող պայմանագրով սահմանվող վարկի մարման ժամանակացույցով, իսկ վարկի տոկոսադրույքը հաշվարկվում է մայր գումարի մնացորդի նկատմամբ,

է. Վարկառուի կողմից վարկի մայր գումարի ժամկետից շուտ կատարված մարումների համար Ֆինանսական կառույցների կողմից տույժ և տուգանք չի հաշվարկվում ու չի գանձվում.

ը. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գործընթացը նախաձեռնում են Ֆինանսական կառույցները, որոնք իրականացնում են սույն ծրագրի պայմաններին համապատասխան գործարքներ.

թ. վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը Վարկառուներին տրամադրվեն 2 % տոկոսադրույքով.

ժ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է վարկի մայր գումարի և վարկի տոկոսադրույքի չսուբսիդավորվող մասի փաստացի մարումների հիման վրա.

ժա. տույժերը և (կամ) տուգանքները սուբսիդավորման ենթակա չեն.

ժբ. վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը ԳՖԿ-ի կողմից փոխանցվում է Ֆինանսական կառույցի համապատասխան հաշվին՝ տվյալ Ֆինանսական կառույցի հայտերի հիման վրա: Հայտի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ԳՖԿ-ի և տվյալ Ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով: Պայմանագրի օրինակելի ձևը մշակում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության հետ.

ժգ. ֆինանսական կառույցը վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտը ԳՖԿ է ներկայացնում ամիսը մեկ անգամ՝ ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը: ԳՖԿ-ն հայտն ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում բավարարում է հայտը և վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը փոխանցել համապատասխան Ֆինանսական կառույցի հաշվի համարին՝ եթե հայտը բավարարում է Ծրագրի պահանջներին.

4) վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման դադարեցվում է՝

ա. Վարկառուի կողմից վարկը ոչ նպատակային օգտագործելու.

բ. եթե առկա են տվյալ վարկի մասով անընդմեջ վաթսուն օրվանից ավել ժամկետանց պարտավորություններ.

գ. Վարկառուի և Ֆինանսական կառույցի միջև կնքված պայմանագրի վաղաժամկետ լուծելու.

դ. Վարկառուի կողմից ներկայացված տեղեկություններում կեղծիքների հայտնաբերման.

ե. Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման և կեղծ տեղեկատվություն տրամադրելու դեպքերում մինչ այդ պահը տրամադրված սուբ-

սիդավորման գումարը ենթակա է վերադարձման (սուբսիդավորված գումարի վերադարձը ԳՖԿ-ին իրականացնում է Ֆինանսական կառույցը): Վերը նշված մնացած դեպքերում վարկի սուբսիդավորումը դադարեցվում է տվյալ վարկի մարման ժամանակացույցով սահմանված վարկի նախորդ մարման օրվանից սկսած:

7. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

23. Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է ԳՖԿ-ն՝ Ֆինանսական կառույցների հայտերի վերլուծության և Վարկառուների ընտրանքային ստուգումների հիման վրա՝ համաձայն ներքին ընթացակարգի:

24. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման հայտերի ամփոփման արդյունքում ԳՖԿ-ն ձևավորում է վիճակագրական տվյալների բազա, որը ներառում է տոկոսադրույքի սուբսիդավորվող վարկի մասին՝ ծրագրի իրականացման հետ կապված տեղեկատվությունը, արձանագրված խնդիրները և իրագործման դժվարությունները:

25. ԳՖԿ-ն Վարկառուների ընտրանքային ստուգումներ կարող է իրականացնել ծրագրի պայմաններին համապատասխանությունն ստուգելու նպատակով:

26. Ֆինանսական կառույցի կողմից վարկի մոնիթորինգն իրականացվում է համաձայն վերջինիս ներքին իրավական ակտերի/ընթացակարգերի, ընդ որում առաջին մոնիթորինգն իրականացվում է Կապալառուի կողմից համակարգը տեղադրելուց հետո երկու ամսվա ընթացքում:

27. Ֆինանսական կառույցը ԳՖԿ-ի և Ֆինանսական կառույցի միջև կնքվող պայմանագրով սահմանված ձևով հաշվետվություն է ներկայացնում ԳՖԿ-ին:

28. Վարկառուի կողմից վարկի ոչ նպատակային օգտագործման կամ ներկայացված կեղծ տեղեկատվության ի հայտ գալու դեպքում Ֆինանսական կառույցը Վարկառուի գործող վարկը հանում է վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրից և իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել վարկի տոկոսադրույքը, կիրառելով տվյալ Ֆինանսական կառույցում գործող գյուղատնտեսական կամ բիզնես վարկերի համար սահմանված ավելի բարձր տոկոսադրույք:

29. ԳՖԿ-ն առնվազն 30 օրը մեկ անգամ հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն:

30. Հաշվետվությունը պարունակում է մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝

- 1) վարկերի մասին տեղեկատվություն՝ ըստ մարզերի համայնքների, վարկերի քանակը, գումարը, վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը,
- 2) տեղեկատվություն մոնիթորինգի արդյունքների մասին.
- 3) հայտնաբերված խախտումների մասին տեղեկատվություն.
- 4) առաջարկություններ ծրագրի պայմանների բարելավման կամ կատարելագործման վերաբերյալ և այլն:

8. ԾՐԱԳՐԻ ՌԻՍԿԵՐԸ

31. Ծրագրի հնարավոր ռիսկեր են համարվում՝

- 1) նախատեսված վարկային ռեսուրսների ոչ ամբողջական տեղաբաշխման հետևանքով վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման նախատեսված գումարներին համարժեք հայտերի բացակայությունը,

2) բնական աղետների, համաճարակների, կամ հիմնական միջոցների փչացման հետևանքով տրամադրված վարկային ռեսուրսների մայր գումարի վերադարձման և տոկոսադրույքի վճարման անհնարինությունը,

3) անբարենպաստ եղանակային պայմանները,

4) անբարեխիղճ տնօրինումը,

5) ներդնող կազմակերպության լուծարումը, որը երաշխիքային սպասարկման ընթացքում կարող է առաջացնել հավելյալ ծախսեր,

6) բերքի շուկայական գնի հնարավոր անկումը:

ՀԱՅՏ

Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման աշխատանքների մասնակցության

..... ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամություն է հայտնում մասնակցելու ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի ---ի N --- արձանագրային որոշմամբ հավանության արժանացած «Կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում իրականացվելիք՝ կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման աշխատանքներին:

Միաժամանակ հայտարարում եմ, որ՝

- մեկ միավոր հողատարածքում կաթիլային ոռոգման համակարգի ներդրումը՝ սխեմայի կազմումն ու տեղադրումը կիրականացվի Ընկերության կողմից,

- կաթիլային ոռոգման համակարգի սխեմայի բացատրական մասում կներառվեն բույսի՝ ջրի պահանջարկի հիմնավորումը, ոռոգման և պարարտացման կառավարման ծրագրերը, ինչպես նաև լիարժեք տեղեկություններ սարքավորումների ծագման, այդ թվում՝ օգտագործված նյութերի մասին,

- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումն ու երաշխիքային սպասարկումը կիրականացվի Ընկերության կողմից,

- Ընկերությունն ունի նախորդ տարիներին նմանատիպ աշխատանքների կատարման ----- տարվա փորձ:

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր՝ Ընկերության գործունեության և կատարած աշխատանքների մասին (ոչ պարտադիր դրույթ):

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կերպ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Ստորագրող՝

.....
(պաշտոնը)

.....
(անունը, ազգանունը)

.....
(ստորագրությունը)

..... 201_թ.

Կ.Տ.

Աղյուսակ 1.

Բազմամյա տնկարկներում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցները

1 հեկտար խնձորի այգում (4x2,5) կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/ h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
1	Գլխավոր PE խողովակաշար, d=63մմ	մ	100	700	70000
2	Միացում PE16մմ	հատ	25	200	5000
3	Ջրման PE խողովակաշար, d=16մմ	մ	2500	150	375000
4	Ջրման օղակի PE խողովակաշար ներդրված կաթոցիկներով (1,8 լ/ժ, 20սմ)	մ	3000	120	360000
5	Եռաբաշխիչ PE16մմ	հատ	1000	150	150000
6	Կրկնօղակ խցան	հատ	1000	30	30000
7	Սեղմիչ ցցեր	հատ	4000	50	200000
8	Եզրափակ խցան d=16մմ	հատ	25	100	2500
	Ընդամենը - 1				1192500
2. Գլխամասային հանգույց					
9	Պոմպային ագրեգատ	հատ	1	42000	42000
10	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	50000	50000
11	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	85000	85000
12	Փականներ	հատ	1	10000	10000
13	Վանտուզ	հատ	1	12000	12000
14	Մանոմետր	հատ	2	12000	12000
15	Ձևավոր մասեր	հավաքածու	1	16500	16500
16	Բաժանարար PE խողովակաշար	մետր	10	1100	11000
	Ընդամենը - 2				238500
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
17	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
18	Նախագծում	հա	1	35000	35000
19	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
20	Մոնտաժ	հա	1	210750	210750
	Ընդամենը - 3				357750
	Ընդամենը 1+2+3				1788750
	Չնախատեսված ծախսեր		5%		89438
Ը ն դ ա մ ե ն ը					1878188

1 հեկտար ընկույզի այգում (6x5) կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
1	Պոլիէթիլենային PE 100 ճնշ. խող. PN10, 40 մմ	գծմ	100	598	59800
2	Խցափակիչ 40	հատ	1	805	805
3	Կաթիլային ոռոգման խողովակ UV-Stab, 16մմ	գծմ	9	160	1440
4	Կաթիլային ոռոգման խողովակ ներդրված PC կաթոցիկներով 16 մմ	գծմ	1700	272	462400
5	Կցամաս Մ16	հատ	17	36	612
6	Սայնիկ Մ16	հատ	17	35	595
7	Անկյուն Մ16	հատ	17	85	1445
8	Խցան ութաձև Մ16	հատ	17	20	340
12	Փական Մ32	հատ	1	2200	2200
	Ընդհամենը	դր			529637
2. Գլխամասային հանգույց					
13	Պոմպային ագրեգատ	հատ	1	47000	47000
14	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	53000	53000
15	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	85000	85000
16	Փականներ	հատ	1	12000	12000
17	Վանտուզ	հատ	1	14000	14000
18	Մանոմետր	հատ	2	6000	12000
19	Ձևավոր մասեր	հավաքածու	1	18000	18000
20	Բաժանարար PE խողովակաշար	մետր	10	1300	13000
	Ընդամենը - 2				254000
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
21	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
22	Նախագծում	հա	1	35000	35000
23	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
24	Մոնտաժ	հա	1	145000	145000
	Ընդամենը - 3				292000
	Ընդամենը 1+2+3				1075637
	Չնախատեսված ծախսեր		5%		26482
	Ը ն դ ա մ ե ն ը				1102119

1 հեկտար խաղողի այգում (3x1,5) այգում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
1	Գլխավոր PE խողովակաշար, d=63մմ	մ	100	700	70000
2	Միացում PE16մմ	հատ	34	200	6800
3	Ջրման PE խողովակաշար, ներդրված կաթոցիկներով (2,1 լ/ժ, 50սմ) d=16մմ	մ	3400	120	408000
4	Կախիչ PE16մմ	հատ	3400	30	102000
5	Կրկնօղակ խցան	հատ	34	30	1020
	Ընդամենը - 1				587820
2. Գլխամասային հանգույց					
6	Պոմպային ագրեգատ	հատ	1	43000	43000
7	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	50000	50000
8	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	82000	82000
9	Փականներ	հատ	1	12000	12000
10	Վանտուզ	հատ	1	12000	12000
11	Մանոմետր	հատ	2	6000	12000
12	Ձևավոր մասեր	հավաքածու	1	13128	13128
13	Բաժանարար PE խողովակաշար	մետր	10	1100	11000
	Ընդամենը - 2				235128
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
14	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
15	Նախագծում	հա	1	35000	35000
16	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
17	Մոնտաժ	հա	1	205692	205692
	Ընդամենը - 3				352692
	Ընդամենը 1+2+3				1175640
	Չնախատեսված ծախսեր		5%		58782
	Ը ն դ ա մ ե ն ը				1234422

դրամ

h/h	Բազմամյա տնկարկներ	Տնկման սխեման	Արժեքը
1	Ծիրան	8x8 մ	1053129
2	Ընկույզ	6x5 մ	1102119
3	Կեռաս	6x6 մ	1257779
4	Դեղձ	5x5 մ	1398600
5	Խնձոր	4x2.5 մ	1878188
6	Ելակ	1 x 0.3 մ	994850
7	Խաղող	3x1.5 մ	1234422
	Միջինը		1 274 155

Աղյուսակ 2.

Բանջարաբոստանային մշակաբույսերի դաշտերում կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ֆինանսական միջոցները

1 հեկտար ճմերուկի դաշտում (3x0,75 մ) կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
	Պոլիէթիլենե PE 100 ճնշ. խող. PN10, 40 մմ	գծմ	100	598	59800
	Խցափակիչ 40	հատ	1	805	805
	Կաթիլային ոռոգման ժապավեն 17 մմ, 1.0լ/ժ, 0.75մ	գծմ	3300	42	138600
	Կցամաս Մ17	հատ	33	153	5049
	Սալնիկ Մ16	հատ	33	35	1155
	Փական Մ32	հատ	1	2200	2200
	Ընդհամենը	դր			207609
2. Գլխամասային հանգույց					
	Պոմպային ագրեգատ	հատ	1	42000	42000
	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	50000	50000
	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	85000	85000
	Փականներ	հատ	1	10000	10000
	Վանտուզ	հատ	1	12000	12000
	Մանոմետր	հատ	2	12000	12000
	Ձևավոր մասեր	հավաքածու	1	17000	17000
	Բաժանարար PE խողովակաշար	մետր	10	1100	11000
	Ընդամենը - 3				239000
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
22	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
23	Նախագծում	հա	1	35000	35000
24	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
25	Մոնտաժ	հա	1	149000	149000
	Ընդամենը - 3				296000
	Ընդամենը 1+2+3				742609
	Չնախատեսված ծախսեր		5%		10380
	Ը ն դ ա մ ե ն ը				752989

1 հեկտար լուլիկի դաշտում (0,8x 0,5 մ) կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
1	Գլխավոր PE խողովակաշար, d=90մմ	մ	100	1250	125000
2	Միացում PE16մմ	հատ	125	200	25000
3	Ջրման ժապավեն, ներդրված կաթոցիկներով (0,76լ/ժ, 10սմ) d=16մմ	մ	12500	50	625000
Ընդամենը - 1					775000
2. Գլխամասային հանգույց					
4	Պոմպային ագրեգատ	հատ	1	42000	42000
5	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	43750	43750
6	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	60000	60000
7	Փականներ	հատ	1	14000	14000
8	Վանտուզ	հատ	1	10000	10000
9	Մանոմետր	հատ	2	12000	12000
10	Ձևավոր մասեր	հավաքածու	1	12000	12000
Ընդամենը - 2					193750
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
11	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
12	Նախագծում	հա	1	35000	35000
13	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
14	Մոնտաժ	հա	1	201750	201750
Ընդամենը - 3					348750
Ընդամենը 1+2+3					1317500
Զնախատեսված ծախսեր			5%		65875
Ը ն դ ա մ ե ն ը					1383375

1 հեկտար սոխի դաշտում (0,4x 0,15 մ) կաթիլային ոռոգման համակարգի ներդրման համար պահանջվող ծախսերի մոտավոր հաշվարկը

դրամ

h/h	Անվանումը	Միավորը	Քանակը	Արժեքը	Գումարը
1. Բաշխիչ ցանց					
1	Գլխավոր PE խողովակաշար, d=90մմ	մ	100	1250	125000
2	Միացում PE16մմ	հատ	250	200	50000
3	Ջրման ժապավեն, ներդրված կաթոցիկներով (0,76լ/ժ, 10սմ) d=16մմ	մ	25000	50	1250000
Ընդամենը - 1					1425000
2. Գլխամասային հանգույց					
4	Պոմպային ագրեգատ	հատ	1	42000	42000
5	Պարարտացման ինժեկցիոն համակարգ	հավաքածու	1	48750	48750
6	Ֆիլտրացիոն համակարգ	հատ	1	75000	75000
7	Փականներ	հատ	1	14000	14000
8	Վանտուզ	հատ	1	10000	10000
9	Մանոմետր	հատ	2	12000	12000
10	Ձևավոր մասեր	հավաքածու	1	12000	12000
Ընդամենը - 2					213750
3. Սխեմայի կազմման և տեղադրման աշխատանքներ					
11	Տեղանքի հետազոտություն	հա	1	12000	12000
12	Նախագծում	հա	1	35000	35000
13	Հողային աշխատանքներ	հա	1	100000	100000
14	Մոնտաժ	հա	1	209250	209250
Ընդամենը - 3					356250
Ընդամենը 1+2+3					1995000
Չնախատեսված ծախսեր			3%		59850
Ը ն դ ա մ ե ն ը					2054850

դրամ

h/h	Բաջարաբոստանային մշակաբույսերը	Տնկման սխեման	Արժեքը
1	Լոլիկ	0,8 x 0,50 մ	1383375
2	Սոխ	0,4 x 0,15 մ	2054850
3	Վարունգ	1,5 x 0,50 մ	999406
4	Ձմերուկ	3,0 x 0,75 մ	752989
Միջինը			1 297 655

Աղյուսակ 3.

Տնտեսական արդյունավետությունը կաթիլային և մակերեսային եղանակներով խաղողի վազի, լուլիկի և խնձորենու մշակության ժամանակ

Տվյալներ		Խաղող		Լուլիկ		Խնձորենի (ինտենսիվ)	
		Կաթիլային	Մակերեսային	Կաթիլային	Մակերեսային	Կաթիլային	Մակերեսային
1	Տնկման սխեմա (մ)	3.0 x 1.8	3.0 x 1.8	1.65 x 0.45	0.9 x 0.6	6 x 5	8 x 6
2	Ոռոգման համակարգի արժեք	1,300,000	-	1,100,000	-	1,400,000	-
	ա. Վերանորոգում և պահպանում բ. 5 տարվա օգտագործում խողավակների, կաթոցիկների և մինչև 10 տարվա՝ պոմպերի, ֆիլտրերի	40,000	-	40,000	-	40,000	-
3	Մշակության ծախսեր (դր/հա)	1,016,000 ²	1,160,000 ¹	1,194,000 ²	1,328,000 ¹	850,000 ²	1,054,000 ¹
4	Սեզոնային ծախսեր (3+2ա) (դր/հա)	1,056,000	1,160,000	1,234,000	1,328,000	890,000	1,054,000
5	Ջրի օգտագործման չափ (լ/բույս/օր)	15	30	5	10	20	40
6	Ակնկալվող բերք (տ/հա)	18	15	72	60	33	30
7	Վաճառքի գին (դր/տ)	120,000	120,000	40,000	40,000	150,000	150,000
8	Եկամուտ (6x7) (դր/հա)	2,160,000	1,800,000	2,880,000	2,400,000	4,950,000	4,500,000
9	Զուտ եկամուտ (8-4)	1,104,000	640,000	1,646,000	1,072,000	4,060,000	3,446,000

¹ Հիմք ընդունելով մակերեսային ոռոգումը: ԽԱՂՈՂԻ ՎԱԶԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Հողի վար և նախապատրաստում (70,000), պարարտանյութ՝ գոմաղբ NPK (100,000), լարերի ձգում և չոր կապ (80,000), այգեբաց (70,000), էտ և արքաոտի հեռացում (130,000), պեստիցիդներ և բուժումներ (200,000), կանաչ հատումներ և կանաչ կապ (60,000), ջրի վարձ (45,000), ջրվորի գումար (40,000), հողի հարկ (35,000), լարերի անջատում, այգեթաղ և այլ ծախս (200,000), բերքահավաք (80,000) և տեղափոխում (50,000): ՊՈՄԻԴՈՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Հողի վար և նախապատրաստում (25,000) պարարտանյութ՝ գոմաղբ և ազոտական (147,000) սաճիլ (200,000) սաճիլում (70,000) կուլտիվացիա և փխրեցում (6x10,000) քաղհան (32x3500), ջրի վարձ (56,000) ջրվորի գումար (20x3000), պեստիցիդներ (60,000) հողի հարկ (18,000) բերքահավաք (12x35,000) այլ ծախսեր (100,000): ԽՆՁՈՐԵՆԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ էտ (16,000), պարարտանյութ՝ գոմաղբ 16տ. (40,000) գոմաղբի ցրում (30,000), սելիտրա (25,000), պեստիցիդներ՝ նյութեր (100,000) սրկման ծախս (40,000), բաժակափոր (30,000), բների սպիտակեցում (25,000), ջրի վարձ (82,000), առուների մաքրում (10,000), հողի հարկ (70,000), մարդկային ռեսուրս 150 մարդ օր (x3,000), արկղեր (100,000) և տեղափոխում (36,000):

² Հիմք ընդունելով կաթիլային ոռոգումը: ԽԱՂՈՂԻ ՎԱՋԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Այլ ծախսերի մասով նույն արժեքային ցուցանիշներն են բացի՝ պարարտանյութ, գոմաղբ NPK (նվազում 30%՝ 70,000), պեստիցիդներ և բուժումներ (նվազում 40%՝ 120,000), ջրի վարձ (նվազում 55%՝ 20,000), ջրվորի գումար (նվազում 87%՝ 5,000), բերքահավաք (աճ 20%՝ 96,000) և տեղափոխում (աճ 20%՝ 60,000): ՊՈՄԻԴՈՐԻ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Այլ ծախսերի մասով նույն արժեքային ցուցանիշներն են բացի՝ պարարտանյութ՝ գոմաղբ և ազոտական (նվազում 40%՝ 89,000), քաղիան (նվազում 60%՝ 45,000), ջրի վարձ (նվազում 55%՝ 25,000) ջրվորի գումար (նվազում 83%՝ 10,000), պեստիցիդներ (նվազում 20%՝ 48,000) և բերքահավաք (աճ 20%՝ 504,000): ԽՆՁՈՐԵՆՈՒ ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ՝ Այլ ծախսերի մասով նույն արժեքային ցուցանիշներն են բացի՝ սելիտրա (նվազում 40%՝ 15,000), պեստիցիդներ՝ նյութեր (նվազում 30%՝ 70,000), սրսկման ծախս (նվազում 30%՝ 28000), բաժակավոր (նվազում 100%՝ 0), ջրի վարձ (նվազում 45%՝ 45,000), առուների մաքրում (նվազում 100%՝ 0), մարդկային ռեսուրս (նվազում 20%՝ 120x3,000), արկղեր (աճ 10%՝ 110,000) և տեղափոխում (աճ 10%՝ 40,000):

Աղյուսակ 4.

Մշակության կազմակերպման հավելյալ հնարավորություն (խաղողի վազի, լոլիկի և խնձորենու օրինակներով)

Տվյալներ		Խաղող		Լոլիկ		Խնձորենի (ինտենսիվ)	
		Կաթիլային	Մակերեսային	Կաթիլային	Մակերեսային	Կաթիլային	Մակերեսային
10	Ջրի խնայողության արդյունքում լրացուցիչ տարածքի ոռոգման հնարավորություն (հա)	0.4	-	0.5	-	0.2	-
11	Լրացուցիչ մշակության ծախսեր (4x10) ² (դր/հա)	422,400	-	617,000	-	178,000	-
12	Լրացուցիչ եկամուտ (8x10) ¹ (դր/հա)	864,000	-	1,440,000	-	990,000	-
13	Լրացուցիչ շահույթ (12-11) (դր/հա)	441,600	0	823,000	0	812,000	0
14	Ընդհանուր արտադրական ծախսեր (4+11) ¹ (դր/հա)	1,478,400	1,160,000	1,851,000	1,328,000	1,068,000	1,054,000
15	Համախառն եկամուտ (8+12) ¹ (դր/հա)	3,024,000	1,800,000	4,320,000	2,400,000	5,940,000	4,500,000
16	Եկամուտ ծախս հարաբերակցություն (15/14)	2.05	1.55	2.33	1.80	5.56	4.27
17	Զուտ հավելյալ եկամուտ կաթիլային համակարգ ներդնելու	905,600	-	1,397,000	-	1,426,000	-

	դեպքում [(13+9կաթիլային) -9 ավանդական] ¹ (դրամ)						
--	---	--	--	--	--	--	--

¹ Հաշվարկները կատարվում են նախորդ աղյուսակի արդյուքներից

² Ծախսերը չեն ներառում կաթիլային ոռոգման համակարգի հավելյալ տարածքում ներդրման արժեքը

Կաթիլային համակարգերի ներդրման համար պահանջվող ընդհանուր ծախսը կարող է փոփոխվել՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով՝ ջրաղբյուրից ու հողամասից դրա հեռավորությունից, այգիների տարիքից, սխեմայից, տեղադիրքից, ռելիեֆից և այլն: Պահանջվող ծախսերը կճշգրտվեն տեղում առավել մանրազննին հետազոտական աշխատանքների իրականացումից հետո՝ սխեմաների կազմման ժամանակ:

12 տոկոսային կետի սուբսիդավորման հաշվարկը*

Տարիներ	Ամիսներ	Տարեկան սուբսիդիա	Միավոր ժամանակահատվածում տրամադրված վարկերի քանակը (հա/ամիս)	Միավոր ժամանակահատվածում տրամադրված վարկերի արժեքը (դրամ/ամիս)	Կուտակված վարկերի արժեքը ժամկետի վերջում (դրամ/ամիս)	Կուտակված սուբսիդիա, որը պետք է վճարել միավոր ժամանակահատվածում (դրամ/ամիս)
1	1	114,652,778	138.9	180,555,555.6	180,555,555.6	0
	2		138.9	180,555,555.6	361,111,111.11	1,805,555.56
	3		138.9	180,555,555.6	541,666,666.67	3,611,111.11
	4		138.9	180,555,555.6	722,222,222.22	5,416,666.67
	5		138.9	180,555,555.6	902,777,777.78	7,222,222.22
	6		138.9	180,555,555.6	1,083,333,333.33	9,027,777.78
	7		138.9	180,555,555.6	1,233,796,296.30	10,833,333.33
	8		138.9	180,555,555.6	1,384,259,259.26	12,337,962.96
	9		138.9	180,555,555.6	1,534,722,222.22	13,842,592.59
	10		138.9	180,555,555.6	1,685,185,185.19	15,347,222.22
	11		138.9	180,555,555.6	1,835,648,148.15	16,851,851.85
	12		138.9	180,555,555.6	1,986,111,111.11	18,356,481.48

2	1	313,263,889	138.9	180,555,555.6	2,106,481,481.48	19,861,111.11
	2		138.9	180,555,555.6	2,226,851,851.85	21,064,814.81
	3		138.9	180,555,555.6	2,347,222,222.22	22,268,518.52
	4		138.9	180,555,555.6	2,467,592,592.59	23,472,222.22
	5		138.9	180,555,555.6	2,587,962,962.96	24,675,925.93
	6		138.9	180,555,555.6	2,708,333,333.33	25,879,629.63
	7		138.9	180,555,555.6	2,798,611,111.11	27,083,333.33
	8		138.9	180,555,555.6	2,888,888,888.89	27,986,111.11
	9		138.9	180,555,555.6	2,979,166,666.67	28,888,888.89
	10		138.9	180,555,555.6	3,069,444,444.44	29,791,666.67
	11		138.9	180,555,555.6	3,159,722,222.22	30,694,444.44
	12		138.9	180,555,555.6	3,250,000,000.00	31,597,222.22

* - Հաշվարկի պայմանները՝ 1. Վարկի մարման ժամկետայնություն՝ 36 ամիս

2. Վճարումները կատարվում են կիսամյակային պարբերականությամբ

3. Ամսական տրամադրվում է հավասարաչափ վարկ՝ 216,666,66.7 դրամ

3	1	425,208,333	138.9	180,555,555.6	3,310,185,185.19	32,500,000.00
	2		138.9	180,555,555.6	3,370,370,370.37	33,101,851.85
	3		138.9	180,555,555.6	3,430,555,555.56	33,703,703.70
	4		138.9	180,555,555.6	3,490,740,740.74	34,305,555.56
	5		138.9	180,555,555.6	3,550,925,925.93	34,907,407.41
	6		138.9	180,555,555.6	3,611,111,111.11	35,509,259.26
	7		138.9	180,555,555.6	3,641,203,703.70	36,111,111.11
	8		138.9	180,555,555.6	3,671,296,296.30	36,412,037.04
	9		138.9	180,555,555.6	3,701,388,888.89	36,712,962.96
	10		138.9	180,555,555.6	3,731,481,481.48	37,013,888.89
	11		138.9	180,555,555.6	3,761,574,074.07	37,314,814.81
	12		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,615,740.74
4	1	455,000,000	138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	2		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	3		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	4		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	5		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67

	6		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	7		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	8		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	9		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	10		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	11		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	12		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
5	1	455,000,000	138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	2		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	3		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	4		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	5		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	6		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	7		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	8		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	9		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	10		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67

	11		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67
	12		138.9	180,555,555.6	3,791,666,666.67	37,916,666.67

6	1	340,347,222			3,611,111,111.11	37,916,666.67
	2				3,430,555,555.56	36,111,111.11
	3				3,250,000,000.00	34,305,555.56
	4				3,069,444,444.44	32,500,000.00
	5				2,888,888,888.89	30,694,444.44
	6				2,708,333,333.33	28,888,888.89
	7				2,557,870,370.37	27,083,333.33
	8				2,407,407,407.41	25,578,703.70
	9				2,256,944,444.44	24,074,074.07
	10				2,106,481,481.48	22,569,444.44
	11				1,956,018,518.52	21,064,814.81
	12				1,805,555,555.56	19,560,185.19
7	1	141,736,111			1,685,185,185.19	18,055,555.56
	2				1,564,814,814.81	16,851,851.85
	3				1,444,444,444.44	15,648,148.15
	4				1,324,074,074.07	14,444,444.44
	5				1,203,703,703.70	13,240,740.74
	6				1,083,333,333.33	12,037,037.04
	7				993,055,555.56	10,833,333.33
	8				902,777,777.78	9,930,555.56
	9				812,500,000.00	9,027,777.78
	10				722,222,222.22	8,125,000.00
	11				631,944,444.44	7,222,222.22
	12				541,666,666.67	6,319,444.44

8	1	29,791,667		481,481,481.48	5,416,666.67
	2			421,296,296.30	4,814,814.81
	3			361,111,111.11	4,212,962.96
	4			300,925,925.93	3,611,111.11
	5			240,740,740.74	3,009,259.26
	6			180,555,555.56	2,407,407.41
	7			150,462,962.96	1,805,555.56
	8			120,370,370.37	1,504,629.63
	9			90,277,777.78	1,203,703.70
	10			60,185,185.19	902,777.78
	11			30,092,592.59	601,851.85
	12			- 0.00	300,925.93